Փա՛ռք Հիսուս Քրիստոսին:

Սիրելի՛ հավատավոր կաթողիկէներ, հատկապես, նրանք, ովքեր տառապում են այս օրերին մեր Սուրբ Մայր Եկեղեցու չլսված ճգնաժամի պատճառով: Սիրելի՛ կաթողիկէ ընտանիքների հայրեր և մայրեր: Սիրելի՛ կաթողիկէ երիտասարդություն: Սիրելի՛ անմեղ կաթողիկէ զավակներ: Եվ հատկապես սիրելի հայեցողական քույրեր միանձնուհիներ, Եկեղեցու հոգևոր գանձեր: Սիրելի՛ կաթողիկէ ճեմարանականներ: Սիրելի՛ կաթողիկէ քահանաներ, որ «սերն եք Հիսուսի Ամենասուրբ Սրտի»:
Եկեղեցու ներսում խռովքը հասել է այն աստիճանին, որ ստիպված ենք Տիրոջն աղոթել Եսթերի խոսքերով. «Չունենք ուրիշ օգնական՝ Քեզնից բացի» (Եսթ. 4:31): Հետևաբար, ապավինե՛նք Մարիամի Անարատ Սրտին՝ ամենօրյա աղոթական արշավի միջոցով՝ խնդրելով սուրբ պապեր: Սաղմոսերգուի հետ միասին կանչելու ենք. «Զարթնի՛ր, Տե՛ր, ինչու՞ ես ննջում: Ելի՛ր եւ մի՛ մերժիր մեզ ընդմիշտ» (Սղմ. 42:23):
18 հունվարի, 2024թ., Հռոմում Սուրբ Պետրոսի Աթոռի հնագույն տոնը

+ Աթանասիուս Շնայդեր, օգնական եպիսկոպոս Աստանայի Սրբուհի Մարիամի Արքեպիսկոպոսության

ԱՂՈԹՔ՝ ՍՈՒՐԲ ՊԱՊԵՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛, Տէ՛ր ողորմեա՛,
Տե՛ր Հիսուս Քրիստոս, Բարի Հովի՛վ, Քո ամենակարող ձեռքով Դու ուղղորդում ես Քո պանդուխտ Եկեղեցին բոլոր ժամանակների փոթորիկների միջով:
Զարդարի՛ր Սուրբ Աթոռը սուրբ պապերով, ովքեր չեն վախենում այս աշխարհի ուժեղներից և զիջումներ չեն անում ժամանակի ոգուն, այլ պահպանում, ամրացնում և պաշտպանում են կաթողիկէ հավատքը՝ մինչև իսկ սեփական արյունը հեղելով, ովքեր հետևում, պաշտպանում և փոխանցում են Հռոմեական Եկեղեցու պատկառելի ծիսակարգը:
Տե՛ր, վերադարձի՛ր մեզ՝ սուրբ պապերի միջոցով, ովքեր բոցավառված առաքյալների խանդավառությամբ, ամբողջ աշխարհին հռչակում են. «Ուրիշ որևէ մեկով փրկություն

չկա, քան՝ միայն Հիսուս Քրիստոսով, որովհետև երկնքի տակ չկա մարդկանց տրված մեկ այլ անուն, որով մենք կարողանանք փրկվել» (տե՛ս՝ Գրծք 4,10-12):

Թո՛ղ, որ սուրբ պապերի ժամանակաշրջանի միջոցով Սուրբ Աթոռը, որը հայրենիքն է կաթողիկէ և առաքելական հավատքի բոլոր նվիրյալների, մշտապես աշխարհի համար շողշողա որպես ճշմարտության ամբիոն: Լսի՛ր մեզ, Տե՛ր, և Մարիամի՝ Եկեղեցու Մոր, Անարատ Սրտի բարեխոսությամբ, շնորհի՛ր մեզ սուրբ պապեր, մեծաթի՛վ սուրբ պապեր: Ողորմի՛ր մեզ եւ լսի՛ր մեզ. ամեն: